



Ազգաբարարության Փող

Trumpet's Sound

39-ՐԴ ՏԱՐԻ, ԱԻՍՏՐԱԼԻԱ

ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ 2008


«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիտնիի Հայ Անտարազնական Եղբայրներու Եկեղեցիի հրատարակութիւնն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիւ Հրաչ Գուլուճեան:

Սոյն թերթի ծախսերը կը հոգացուի հաւատացեալներու սրտաբոխ նուէրներով:

**«Կասն զի Տէրը ինք ազգաբարարեան
հրամանով, հրեւակաղտեփն ձայնովը
ու Ասուծոյ փողովը երկինքն ողիսի
իջնէ»: Ա ԹԵՍ. 4:15**

**For the LORD HIMSELF will descend
from heaven with a cry of command,
with the Archangels call, and with
the sound of the Trumpet of God.
1 Thess. 4:16**

Գանձասար



*«Աստուած, որ աշխարհը ստեղծեց եւ անոր մէջի բոլոր
բաները, անհկա երկնքի ու երկրի Տէրն ըլլալով՝ ոչ
չեռագործ Կանարներու մէջ կը բնակի...» Գործք 17:24:*



Հայ Աւետարանական Եղբայրներու Եկեղեցի
ARMENIAN EVANGELICAL BROTHERS CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHING BY THE
ARMENIAN EVANGELICAL BROTHERS CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BROTHERS CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.armenianbrethren.org

Կողքի նկարը՝ Գանձասարի վանք, Դարաբաղ (Օգոստոս 2007), նկարող՝ Սարիսէ Գրիգորեան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յոյս Հովիւ՝ Հրաչ Գույուճեան

Փոխուած կեանքեր Վինա Չրայել

«Եւ իրարու հետ քաղցր եղէք» Սիւսան Խաչոյեան

Ընդհանրութիւն, որոնց կը բխտուին մանուկները Մանկանց աւետ. ընկ.

Տաք պատուիրանները (8) Հովիւ՝ Հրաչ Գույուճեան

Ընտրիք և խաղաղութիւն Հովիւ՝ Հրաչ Յակոբեան

Յարատևութիւն (4) Տօթթ. Արմեն Կարաւեան

Հարցազրոյց Փօլ Մար Ուէլլի եղբոր հետ Վինա Չրայել

Յոյս

Յոյսը այս դարուս ամենակարևոր և կենսական պետքերէն մէկն է մարդկութեան համար: Աստուածաշունչը կ'ըսէ. «Եւ յոյսը ամօթով չի ձգեր»:

Երբ կը նայիմ շուրջս և աշխարհի վիճակին՝ երկրաշարժի աղէտներուն, պորթկած և բարձրացած ջուրերուն և վնասներուն, պատերազմներուն և պատերազմներու վախերուն, սովին և աղքատութեան, դրամական նեղութիւններուն և սղութեան կը համոզուիմ որ մարդկութիւնը այսօր ամենէն շատ յոյսի կարիք ունի: Աշխարհ իր վերջին օրերու տառապանքներէն կ'անցնի և մարդոց մէջ մեծ վախ մը կ'արթնցնէ: Անոնք անյոյս և դիմադրելու անկարող ըլլալով այս դժուարութիւններուն տակ իրենք իրենց ցաւերը մեղքով, զեխութեամբ, զինեմուլութեամբ և թմրեցուցիչներու միջոցով կը ջանան մոռցնել, և յետոյ գերի կը դառնան այս բաներուն: Անոնք ոչ թէ որ իրենց վիճակէն կը բարելաւուին, ապա օրէ օր աւելի կը վատթարանան և իրենց կեանքերը չարին ճիրաններուն մէջ կը գտնեն:

Ուրիշներ վախով կ'ապրին և հոգեկան անհանգստութիւններէ կը տառապին, որովհետև մարմինը ուրախութիւն կը փնտռէ, բայց աշխարհ իր մէջ չունի որ մեզ տայ: Մեր մանկական ուրախութիւնները վերջացան, այժմ կը տեսնենք իրականութիւն մը և մեզ կը մտահոգէ այս: Յոյսը լաւ բան է, բայց որո՞ւ յուսանք.

- աշխարհի կառավարիչներո՞ւն,
- եկեղեցական կղերականներո՞ւն,
- գործատերի՞ս,
- հայրիկի՞ս,
- ծնողի՞ս,
- ամուսինի՞ս,
- զաւակներո՞ւս:

Անիծեալ ըլլայ այն մարդը որ մարդու կ'ապաւինի: Տէր Յիսուս կ'ըսէ. «Ինձի նայեցէ՛ք»: Երբ մենք կը նայինք Տէր Յիսուսին, հոն Իր մէջ մենք կրնանք գտնել այդ խաղաղութիւնը և ապահովութիւնը: Երբ մենք մեր յոյսը կը դնենք Քրիստոսի վրայ, Ան մեզ ամօթով չի ձգեր: Կեանքիս մէջ բնաւ չտեսայ անձ մը, որ յոյսը Տէրոջ վրայ դրած ըլլար և ամօթով մնար:

Եթէ դուն Անոր կը տանիս քու հոգերդ, մտահոգութիւններդ և վախերդ Ան Իր վրայ կ'առնէ այդ բոլորը և քեզ կ'ազատէ այդ բոլորէն: Տէր Յիսուս մեր մեղքերուն համար խաչը բարձրացաւ, Իր քաջարար արիւնը մեզ համար թափեց, որ մենք փրկութիւն ստանանք: Այս շնորհքը մեզ հասաւ և միլիոնաւոր հաւատացեալներ աշխարհի չորս կողմը կը վայելեն այս ուրախութիւնը Քրիստոսի մէջ:

Յոյսը հաւատացեալին պարգևն է, որ Քրիստոս մեր սրտերուն մէջ կը դնէ ակնկալելու, սպասելու, հաւատալու, ուրախանալու, քաջալերուելու, մխիթարուելու: ԱՅԳ ԻՐ ՀՈԳԻՈՅՆ ՊԱՐԳԵԻՆ Է ՍԵՐ ՍԷՋ: Երբ դուն Քրիստոսը կ'ընդունիս կեանքէդ ներս, սրտիդ մէջ կենդանի ջուրի աղբիւր մը կը սկսի փխիլ: Ալ ոչ թէ մեր շուրջի բաները կարևոր կ'ըլլան ու մեզ կ'ազդեն, հապա մեր ներսինը մեզ կը պաշարէ և կը հրապուրէ ու կը քաշէ մեզ դէպի Իրեն:

Անցեալին հաւատացեալներ չարչարուեցան, խաչուեցան, շատերն ալ առիծներու առջև դրուեցան, բայց անոնք ոչ թէ լալով, վախով, չուզելով զացին: Մեր պապերը և հաւատքի հերոսներն ալ իրենց կեանքերը տուին, քանի անոնք հաւատքի աչքերով կը նայէին և մեծ յոյս ունէին այն օրուան համար, որ Տէրը խոստացաւ թէ դուք Ինծի հետ պիտի ըլլաք յաւիտենականութեան մէջ:

- Մեր յոյսը Անոր արեան մէջ է, որ մեզ ամէն մեղքէ կը սրբէ,
- Մեր յոյսը Տէր Յիսուս Քրիստոսի մէջ է, որ մեռելներէն յարութիւն առաւ,
- Մեր յոյսը Անոր Խօսքին մէջ է, թէ մեզ համար տեղ մը կը պատրաստէ՝ Երկինքը ուր ցաւ, նեղութիւն և արցունք գոյութիւն չունի:

Յուսա՛ դուն ալ Քրիստոսին և բնաւ ամօթով պիտի չմնաս, ոչ երկրի վրայ ոչ ալ երկնքի մէջ:

Աստուած օրհնէ ձեզ:

Հովիւ՝ Հրաչ Գույումեան

Փոխուած կեանքեր

Իմ անունս Արեքնազ Պալասանեան է (Վիւնա): Ծնած եմ Իրաքի մէջ 1961 թուականին և այժմ կը բնակիմ Երևանի մէջ: 1991 թուականին

ճամբորդեցի Յորդանան, ուր Տէր Յիսուս Քրիստոսին ընդունեցայ որպէս անձնական Փրկիչս: Այդ ժամանակ կեանքիս մէջ լեցուն խնդիրներ կային և անլուծելի դժուարութիւն մը ունէի, որը ոչ մէկը չէր գիտեր, նոյնիսկ ընտանիքիս անդամները: Չէի կրնար նայիլ մայրամուտին, տեսակ մը անհանգիստ և ջղային կ'ըլլայի:

1993 թուականին, Յորդանանի մէջ սկսայ աշխատիլ հոգևոր գրադարանի մը մէջ որպէս քարտուղար: Ինձի համար դիւրին չէր այդ գործը, քանի որ տակաւին հաւատացեալ չէի, իսկ միւս բոլոր գործընկերներս հաւատացեալ էին: Սակայն, օր մը գրադարանի անձնակազմով գացիմք հանգստանալու Յորդանանի գեղեցիկ լեռներէն մէկուն ստորոտի բանակավայրը: Ինչպէս վերը նշեցի թէ անլուծելի խնդիր մը ունէի, և ինձի համար դժուարութեան դուռ մըն էր այս, քանի որ բանակումին մէջ ես ստիպուած պիտի ըլլայի ականատես ըլլալու մայրամուտին:

Նոյն օրը, աշխատակիցներէն մէկը ինձի հարց տուաւ թէ արդեօ՞ք կ'ուզեմ ընդունիլ Տէր Յիսուսին, որպէս Փրկիչ: Ժամանակը մայրամուտի մօտ էր, Անոր հարցին չպատասխանեցի, բայց երբ ան շարունակեց վերջ ի վերջոյ այո ըսի: Այո ըսի, տեսնելու թէ նոյնիսկ եթէ ընդունիմ Տէրոջը ի՞նչ բան պիտի փոխուի: Կրկնեցի ընկերոջս ետևէն աղօթքը, և մինչ աչքերս գոց կ'աղօթէի, մեծ խաղաղութիւն մը մտաւ սրտիս մէջ, և մի քանի վայրկեաններ էր, երբ աչքերս բացի, տեսայ արևը ճիշդ իմ առջևս, և ինչքան գեղեցիկ էր արևը այդ պահուն, որ ես կարծես թէ երբեք այդպիսի գեղեցկութիւն մը տեսած չըլլայի, և յիշեցի որ ճիշդ մի քանի վայրկեան առաջ ինձի համար մեծ խնդիր էր մայրամուտին կենալ և նայիլ արևին, բայց հիմա ամէն ինչ փոխուած էր: Հիմա, ես սրտիս մէջ խաղաղութիւն և ուրախութիւն ունիմ, Տէրը ինձի տուաւ նոր կեանք մը, զիս փոխեց, ներեց մեղքերս ու փրկեց հոգիս: Այդ օրը 1993 թուականի Յունիսի 2-ն էր:

Ես խոստացայ Տէրոջը, որ ապրիմ և վկայեմ Իր մասին իմ կեանքիս մնացած օրերը: Ուզեցի ցոյց տալ բոլոր անոնց, որոնք խաւարի մէջ կը բնակին թէ որքան Տէրը իրենց մասին կը հոգայ ու զիրենք կը սիրէ, Քրիստոսը որը մեռաւ իսաչին վրայ իրենց մեղքերուն համար: Ես փառք կուտամ Տէրոջը՝ Հայր, Որդի, և Սուրբ Հոգիին անունով: Ամէն:

Վիմա Ջրայէլ

«Եւ իրարու հետ քաղցր եղէք, գթած, ներելով իրարու, ինչպէս Աստուած Քրիստոսով ներեց ձեզի» Եփես. 4:32:

Կան մարդիկ, որ շատ դժուար կը գտնեն ներելը: Անոնք կ'ըսեն թէ եթէ կրնաս ներել՝ ուրեմն գործուած յանցանքը թեթև բան մըն էր: Արդեօք ճիշտ է այս մտածելակերպը: Արդեօք ներելը կը նշանակէ՞ թէ գործուած յանցանքը «պզտիկ» յանցանք մըն էր:

Ո՛չ երբեք: ներելը մեղքը թեթևի չ'առնէր: Ներելը որոշում մըն է փոխարինելու այն շնորհքը զոր դուն Աստուծմէ ստացած ես: Ներել կը նշանակէ ըսել «Այո՛, դուն այս բանը ընելով զիս վիրատրեցիր, ցաւուցիր, ըրածդ սխալ էր, սակայն ես քեզ պիտի ներեմ, քեզի դէմ պիտի չկենամ, քեզմէ վրէժ պիտի չ'առնեմ, քեզ պիտի չ'ատեն այլ՝ պիտի ներեմ»: Ներելը պէտք չէ ըլլայ միայն այն ատեն երբ դիմացինը ներողութիւն կը խնդրէ: Աստուծոյ ձեռք այդ չէ: Եթէ սպասենք որ մարդիկ խոստովանին իրենց սխալները ու յետոյ ներենք, շատ անգամներ շատ երկար պիտի սպասենք: Սորվինք Աստուծմէ, Ան մեզ այնքան սիրեց որ «Երբ դեռ մեղաւոր էինք Քրիստոս մեզի համար մեռաւ» (Հռովմ. 5:8,9) և «Քրիստոսով՝ Աստուած մեզ ներեց» (Եփես. 4:32):

Ներելը դիւրին չէ, բայց կարելի է Աստուծոյ գորութեամբ: Եթէ Ան մեր մէջ կ'ապրի, մենք ալ նոյնը կրնանք ընել: Որովհետև Ան մեզ ներեց՝ մենք ալ կրնանք ուրիշներուն ներել: Որովհետև Ան սիրեց՝ մենք ալ կրնանք սիրել: Յովսէփ իր եղբայրներուն կրցաւ ներել, որովհետև Աստուած էր զինք կառավարողը. «Աստուած անոնց խորհած չարութիւնը աղէկ դարձուց» (Ծննդ. 50:20): Մենք ալ որ խոստում ունինք թէ «Ամէն բաները բարիի գործակից կ'ըլլան անոնց, որոնք զԱստուած կը սիրեն», պէտք է ներենք՝ վստահելով Աստուծոյ Խօսքին ու Անոր հաւատարմութեանը:

Նայէ՛ Յիսուսի օրինակին: Ան դենջակը մէջքին կապած՝ ծրելով Իր աշակերտներուն ոտքերը լուաց: Եթէ Ինք Աստուած ըլլալով այս գործը ըրաւ, մենք ի՞նչ ընելու ենք: Այսօր, Յիսուս մեր ալ ոտքերը կը լուայ երկու նպատակի համար: Նախ՝ որ մեզի ողորմութիւն շնորհէ և ապա՝ որ մեզի սորվեցնէ նոյնը ընել: Աստուծոյ շնորհքը սահման կամ պայման չունի:

Մենք ալ Անոր հետևելով ուրիշներուն պէտք է շնորհք ցուցնենք առանց սահմանի կամ պայմանի:

Ի՞նչ կը նշանակէ Անոր օրինակին հետևիլ: Կը նշանակէ ծռիլ Անոր պէս, դպչիլ մեզ վիրաւորողներուն և լուալ անոնց յանցանքները մեր ստացած շնորհքովը: Թերևս մտածես. «Ես չեմ յանցաւորը, ա՛ն է որ ինծի վիրաւորեց, ստեց, ցաւցուց, ես սխալ բան մը չեմ ըրած»: Հաւանաբար, ճիշտ ես. հաւանաբար դուն յանցաւոր չես. բայց նայէ՛ Յիսուսի. Ա՛ն ալ յանցաւոր չէր: Այդ վերնատան մէջ գտնուող բոլոր մարդոց մէջ միայն մէկ անձ կար որ արժանի էր իր ոտքերը լուացուելու՝ այն ալ Յիսուս Ինքն էր: Բայց ի՞նչ եղաւ. Ինքն էր որ ուրիշներուն ոտքերը լուաց: Ան՝ որ արժանի էր սպասարկուելու՝ սպասարկեց:

Յիսուսի սորվեցուցածը այն է որ ոչ թէ յանցաւորը, այլ՝ իրաւունքի տէր եղողը պէտք է սկսի «կամուրջ» շինել. ոչ թէ մեղաւորը, այլ՝ անմեղը. ոչ թէ տկարը, այլ՝ զօրաւորը:

Գիտե՞ս ինչ կը պատահի երբ այս բանը ընենք: Շատ անգամներ երբ իրաւունքի տէր եղողը կը սկսի սխալ եղողին «ոտքերը լուալ», շուտով սխալ եղողն ալ ծունկի կուգայ: Շատ անգամներ յարաբերութիւններ կը մտերմանան ո՛չ թէ որովհետև յանցաւորը կը պատժուի, այլ քանի որ իրաւունք ունեցողը կը ողորմի:

Այսօր, որո՞ւ դժուար կը գտնես ներելը: Աղօթէ՛ անոր համար և Աստուծո՛ւմ գօրութիւն խնդրէ իրեն ներելու: Ներելը հաւատքի քայլ մըն է: Ներելով դուն կը վստահիս Աստուծոյ արդարութեան ու Անոր կը յանձնես քու հարցերդ: Ներելով դուն կը սիրաշահիս դիմացիներիդ ու բարի օրինակ կ'ըլլաս անոր: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Սիրելիներ, վրէժխնդրութիւն մի ընէք ձեր անձերուն համար, հապա բարկութեան տեղ տուէք. վասն զի գրուած է, վրէժխնդրութիւնը իմն է, ես պիտի հատուցանեմ, կ'ըսէ Տէրը: Ուստի եթէ քու թշնամիդ անօթեցեր է՝ հաց տուր անոր, և եթէ ծարաւ է՝ ջուր տուր անոր. քանզի այս ընելով՝ անոր գլխուն վրայ կրակի կայծեր պիտի դիգես: Չարէն մի յաղթուիր, հապա բարիով յաղթէ չարին» (Հռովմ. 12:19-21): Արդեօք կա՞յ անձ մը որու պէտք է ներես: Կա՞յ մէկը որու երկար ժամանակ է չես խօսած իր ըրածին պատճառով: Չարէն մի՛ յաղթուիր, հապա բարիով յաղթէ չարին: Աղօթէ՛ անոր համար և ներէ զինք, ինչպէս Աստուած Քրիստոսով ներեց քեզ:

Սիւզան Խաչոյեան

Խնդիրներ, որոնց կը բախուին մանուկները Մօտ ընկերութիւն անհաւատներու հետ

Քրիստոնէան կրնայ ենթարկուիլ այս աշխարհին՝ անհաւատ ընկերներու ազդեցութեան տակ գտնուելով: «Մի խաբուիք, չար ընկերակցութիւնը աղէկ բարքը կ'ապականէ» (Ա Կորնթ.15:33):

Շատ երիտասարդներ Աստուծմէ հեռացեր են և ունեցեր են մեծ խընդիրներ, անհաւատներու կողմէ ամէնուր թափանցող ճնշման պատճառով: Շատ դժուար է հետևիլ Յիսուսին, բայց դիւրին է յանձնուիլ մեծամասնութեան անմաքուր ազդեցութեանը:

Արդեօ՞ք ճիշդ է, որ փրկուած անձը ժամադրուի չփրկուածի մը հետ: Բաւականին վտանգաւոր է, որովհետև եթէ այդ յարաբերութիւնները շարունակուին, այդ կարող է յանգեցնել ամուսնութեան:

Տէր Յիսուս կը սիրէ մեղաւորներուն, բայց կ'ատէ անոնց մեղքերը: Մենք պէտք է ընկերանանք անհաւատներու հետ, որպէսզի վկայենք անոնց Յիսուսի մասին, բայց չենք կրնար շատ մտերիմ յարաբերութիւն ունենալ անոնց հետ, եթէ մենք վերստին ծնուած ենք, իսկ անոնք՝ ոչ: Մենք պէտք է անկեղծ ընկերութիւն գտնենք քրիստոնէաներու հետ: Աստուածաշունչը յստակ կ'ըսէ. «Անհաւատներուն հետ օտարախառն լծակից մի ըլլաք, քանզի ի՞նչ մասնակցութիւն ունի արդարութիւնը անօրէնութեան հետ և ի՞նչ հաղորդակցութիւն ունի լոյսը խաւարին հետ» (Բ Կորնթ. 6:14): Եթէ մէկը փրկուած է, իսկ միւսը՝ ոչ, ապա այդ միութիւնը չի կրնար ղեկավարուիլ Յիսուսի կողմէ: Փաստերը կը վկայեն, որ այդպիսի «օտարախառն» ամուսնութիւններու ժամանակ մանուկներու մեծամասնութիւնը կը հետևի չփրկուած ծնողին:

Մանկանց ւստարանչութեան ընկերակցութիւն



Տասը պատուիրանները

8) «Գողութիւն մի՛ ըներ»:

Թող որ քեզ յիշեցնեն այս խօսքերը: Այս խօսքերը ոչ թէ մայրիկդ, հայրիկդ կամ շրջանային ոստիկանն էր քեզ սորվեցնողը այլ Աստուած Ինք քեզ կը պատուիրէ ըսելով. «Գողութիւն մի ըներ»: Գողութիւնը մեղք է ոչ թէ ճարպիկութիւն, գողութիւնը հարուստ կամ աղքատ ըլլալու հետ կապ չունի, այդ Ամերիկայի կամ Հայաստանի մէջ ապրելու հետ ալ կապ չունի: Գողութեան մեղքով բռնուողը կ'արժանանայ բանտարկութեան, կախաղանի և որոշ երկիրներու մէջ ալ գողութիւն ընողին ձեռքերը կը կտրեն, որպէսզի ուրիշներ չհամարձակին նոյնը ընել, բայց Աստուած որ ծածուկը կը տեսնէ գողութիւն ընողին յախտենական կրակին մէջ կը պատժէ:

Աստուծոյ Խօսքին մէջ կը կարդանք ամուսնացած գոյգի մը մասին Ամանիա և Սափիրա անունով, որոնք իրենց կալուածը ծախեցին և մէջէն վերցնելով գողցան և խաբեցին եկեղեցիին: Մոսկալի պատիժով մը անոնք պատժուեցան Աստուծմէ, երբ այդ սուտը խօսեցան տեղոյն վրայ ինկան ու մեռան և մեծ վախ մը ինկաւ եկեղեցիին վրայ:

Կը տեսնենք որ Աստուած կ'ատէ գողութիւնը: Այս մեղքը ոչ թէ վաճառականները կ'ընեն, ոչ ալ աղքատները կ'ընեն, հապա մեծահարուստներ այս նոյն մեղքին մէջ կը գտնուին, որ Աստուծոյ 8-րդ պատուիրանն է: Գողութիւն կը նշանակէ.

- առնել բան մը, որ քեզ չի պատկանիր,
- առնել բան մը առանց արտօնութիւն ունենալու,
- առնել բան մը խաբելով,
- առնել բան մը զրպարտութեամբ,
- առնել բան մը, քանի որ դիրքի վրայ եմ,
- առնել բան մը, որ չունիմ կամ կը ցանկամ ունենալ,
- առնել բան մը, առանց անոր գինը վճառելու,
- առնել բան մը, որ մէկը զիս կը վստահի որ պահեմ իրեն համար,
- առնել բան մը, որ Աստուած զիս չէ տուած նամանաւանդ չէր ուզեր որ ունենայի: Այս բոլոր առնելները հաւասար են գողութեան:

Նախ անձը պէտք է գիտակցի որ ըրածը մեղք է, ան պէտք է այս մեղքը խոստովանի Աստուծոյ և ալ մեղք չգործէ: Անձը մոլի ըլլալով այս մեղքին, Աստուծմէ պէտք է օգնութիւն խնդրէ, որ Տէրը զինք լման և կատարեալ կերպով փոխէ: Թերևս հարցնես թէ կա՞յ ներում աւագակի մը համար: Խաչին վրայ աւագակ մը կար և երբ ան տեսաւ Տէրոջը ըսաւ. «Բայց դուն մեղք մը չգործեցիր, ես մեղաւոր մարդ եմ»: Երբ կ'ընդունիս որ մեղաւոր մարդ մըն ես և կը զղջաս, ներումը կը ստանաս: Աւագակը խաչին վրայ կանչեց ըսելով. «Տէր, յիշէ զիս երբ քու թագաւորութեամբդ գաս»: Փրկիչին անմիջական պատասխանն ալ եղաւ. «Այսօր ինձի հետ դրախտը պիտի ըլլաս»:

Սիրելի՛ս, Տէր Յիսուս քեզ մեծ սիրով մը սիրեց և Ինք կը սպասէ որ դուն այդ քաջութիւնը ունենաս երթալու Իրեն խոստովանելու քու մեղաւոր ըլլալդ: Մենք ալ մեր մեղքերուն համար զացինք Յիսուսին և այսօր այս նոր կեանքը կը վայելենք Իր մէջ: Բողոքս ալ մեղաւոր ծնանք մեղսալի ցանկութիւններով, բայց Աստուած մեր մեղքերուն համար խաչի մահով մեռաւ, որ դուն և ես կեանք ունենանք: Սիրելի՛ս, ով որ ես, ալ մեղք մի գործեր և բնաւ ճարպիկութիւն մի սեպեր ըրածդ, գնա՛ Յիսուսին խոստովանէ, վերադարձուր գողցածդ և վայելէ այդ խաղաղութիւնը և ուրախութիւնը որ Տէրը կրնայ դնել կեանքիդ մէջ, երբ խոստովանութեամբ Իրեն երթաս:

Օր մը, տիկնոջս հետ սուրճի զացած էինք, տիկինս երբ վերջացաւ գնաց ջուր խմելու, ես ալ կարծելով թէ մեր պարտքը վճառած ենք հանգիստ մը դուրս ելանք, և ճամբան կէս ժամէն աւելի արդէն տունը քշեր էինք, երբ խօսքիս մէջ հարցուցի տիկնոջս թէ արդեօ՞ք տուած էր դրամը, տիկինս ալ ըսաւ. «Ոչ, ես խորհեցայ թէ դուն տուիր»: Շատ անհանգիստ եղանք երկուքս ալ, բայց մինչև ետ վերադառնալիս անոնք գոցած պիտի ըլլային և մենք ալ չկրցանք ետ երթալ: Ուրիշ օր մը ետ զացինք և խոստովանեցանք թէ մոռցած էինք և պատրաստ էինք մեր պարտքը տալու: Շատ ապշած մնացին, բայց մենք մեծ խաղաղութիւն և ուրախութիւն վայելեցինք մեր սրտին մէջ:

Սիրելի՛ս, ներման մէջ մեծ ուրախութիւն կայ: Ալ մինչև ե՞րբ պիտի շարունակես այս ծուռ ճամբաներուդ մէջ, գնա՛ Յիսուսին պատմէ և թող որ Տէրը քեզ ներէ և քեզ համար Աստուծոյ օրհնութիւնները ապահովէ թէ երկրի վրայ և թէ Երկնքի մէջ: Գնա՛ և ալ մեղք մի գործեր:

Հովիտ՝ Հրաչ Գույումճեան

Շնորհք և խաղաղութիւն

Պօղոս և Պետրոս առաքեալները իրենց բոլոր նամակներուն մէջ յատուկ օրհնութիւն մը կը մաղթէին նամակները ստացողներուն համար՝ շնորհք և խաղաղութիւն: Ոմանք թերևս մտածեն թէ շնորհքը բան մըն է որուն մարդիկ կարիք ունին երբ կը փրկուին, և սա ճշմարիտ է: Եփեսացիս 2:8-ի համաձայն, մենք փրկուած ենք մի միայն շնորհքով, և որպէս արդիւնքը այս փրկարար շնորհքին, մենք խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ (Հռովմ. 5:1): Հաւատքով արդարացած ըլլալով, մենք խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ (այն պահուն, երբ կը հաւատանք): Մենք, որ Աստուծոյ թշնամի էինք, հիմա հաշտուեցանք ու խաղաղութիւն ունեցանք Աստուծոյ հետ: Եթէ շնորհքը և խաղաղութիւնը անձի մը փորձառութիւնն է փրկութեան պահուն, հապա ինչո՞ւ համար առաքեալները այսպիսի օրհնութիւն մը կը մաղթէին հաւատացեալներուն, որոնք արդէն իսկ ունէին այս երկուքը՝ շնորհքը և խաղաղութիւնը:

Ճշմարիտ է, որ մարդը փրկուելու համար պէտք ունի Աստուծոյ շնորհքին, սակայն փրկուած անձը նաև շնորհքի կարիք ունի հոգևոր կեանքը ապրելու համար: Շնորհք կը նշանակէ պարգև մը, որուն արժանի չէինք: Այս պարգևը ստացանք ճիշտ այն պահուն երբ փրկուեցանք: Սա փրկարար շնորհքն է, որը կապ ունի մեղքերու թողութեան հետ: Հռովմայեցիս 5:20-ը մեզ կը յիշեցնէ թէ Աստուծոյ շնորհքը արեւի գերագանց է քան որևէ հնարաւոր մեղք, այսինքն ուրիշ խօսքով, ինչ ալ ըլլայ մէկու մը մեղքը, Աստուծոյ շնորհքը շատ արեւի մեծ է, ուստի երբ անձ մը Տէրոջմէ թողութիւն կը խնդրէ, Տէրը կրնայ ներել անոր, թէս ան այդ բանին արժանի չէ: Սակայն, այնուամենայնիւ, Աստուածաշունչը կը խօսի նաև ուրիշ տեսակի շնորհքի մը մասին, որուն անձը կարիք ունի իր հոգևոր կեանքը շարունակելու համար: Այս շնորհքը ներկայացուած է Յակոբոս 4:6-ի մէջ, որտեղ Աստուած կը խոստանայ տալ յատուկ շնորհք մը անոնց որոնք խոնարհ են: Խոնարհութիւն կը նշանակէ քու ոյժդ ոչինչ սեպել և յենուիլ ու վստահիլ ուրիշ մէկու մը վրայ: Երբ Հաւատացեալ մը կը գիտակցի թէ ինքը իր ուժով չի կրնար ոչ մէկ բան աւարտել, և թէ ինք կախում ունի Աստուծմէ իր ամէնօրեայ գործունէութիւններու համար, այդ ժամանակ Աստուած իրեն յատուկ շնորհք մը կուտայ, իր թերութիւնները ծածկելու համար: Այս շնորհքը որևէ կապ չունի փրկութեան հետ, այն յատուկ շնորհք է, որը մեզ կը հասնի ներութեան պահերուն:

Սիրելի՛ հաւատացեալ, երբ կեանքի պարագաները անտանելի ըլլան և կարծես թէ ոչ մէկ յոյս չկայ, անձդ խոնարհեցուր Տէրոջ առջև, գիտակցիր որ քու ոյժովդ ոչ մէկ բան չես կրնար ընել, և ետքը Աստուած պիտի միջամտէ և սքանչելի կերպով Անոր շնորհքը պիտի լեցնէ քու բոլոր պակասութիւններդ:

Իսկ ի՞նչ խօսք խաղաղութեան մասին: Չէ՞ որ հաւատացեալը խաղաղութիւն կը ստանայ այն պահուն երբ դարձի կուգայ: Այո, այդպէս է, բայց Աստուածաշունչը կը խօսի խաղաղութեան երկու տարբերակներու մասին՝ Աստուծոյ հետ խաղաղութիւն և Աստուծոյ խաղաղութիւնը: Հաւատացեալը Աստուծոյ հետ խաղաղութիւն կը ստանայ այն պահուն երբ դարձի կուգայ (Հռովմ. 5:1): Այս խաղաղութիւնը փրկարար շնորհքին ուղղակի արդիւնքն է, որը մենք կ'ունենանք փրկութեան պահուն: Սակայն, հաւատացեալը նաև կրնայ ունենալ Աստուծոյ խաղաղութիւնը (Փիլիպպ. 4:6-7): Այս խաղաղութիւն մըն է, որը կուգայ երբ մենք մեր բոլոր կարիքները աղօթքով Աստուծոյ կը յանձնենք, երբ լուռ անձնութեամբ կը գիտակցինք որ մեր բոլոր կարիքները կը հոգացուին ամենակարող և հզօր Աստուծոյ միջոցով: Աստուծոյ խաղաղութիւնը այն հանդարտ ու վստահ դիրքն է, որ հաւատացեալը ունի փորձանքներու և դժբախտութիւններու մէջ, այն գիտակցումով որ անոնք որոնք Աստուծոյ կը վստահին երբեք ամօթով պիտի չմնան (Եսայ. 49:23): Ուստի, այլևս զարմանալի պիտի չըլլայ մեզի թէ ինչու առաքեալները ամէնէն շատ շնորհք և խաղաղութիւն կը ցանկային հաւատացեալներուն, որոնք արդէն իսկ փորձառաքար վայելած էին Աստուծոյ շնորհքն ու խաղաղութիւնը:

Սիրելի՛ ընթերցող, արդեօք փորձառաքար վայելած ես Աստուծոյ փրկարար շնորհքը և արդեօք ունեցած ես խաղաղութիւն Աստուծոյ հետ: Եթէ ոչ, ապա դուն կարիք ունիս դիմելու Իրեն՝ մեղքերուդ թողութեան համար և այն ժամանակ Աստուծոյ հետ խաղաղութիւն պիտի ունենաս: Եթէ արդէն այդպէս ըրած ես, արդեօ՞ք Անոր շնորհքը կը վայելես ամենօրեայ կեանքիդ մէջ և այդպէս ընելով կը վայելէ՞ս Անոր խաղաղութիւնը, եթէ ոչ, խոնարհեցուր անձդ Աստուծոյ առջև, բոլոր ճամբաներդ Անոր յանձնէ, և Ան պիտի ուղղէ քու շաւիղներդ և դուն պիտի վայելես Անոր շնորհքն ու խաղաղութիւնը քու կեանքիդ բոլոր պարագաներուն մէջ:

Հովիւ՝ Հրաչ Յակոբեան

Յարատևութիւն - մաս 4

Դիմադրէ մեղքը

«Տակաւին արին թափելու չափ պատերազմելով հակառակ չկեցաք մեղքին»: (Եբր. 12:4)

Երիտասարդ մը կը մօտենայ ծերունի աճաբարարի մը և կը հարցնէ թէ ինչպէս ինք կրնայ մոգական հնարքներ կատարել, ան ալ կը պատասխանէ ըսելով. «Ինչ ալ ընես, չըլլայ որ մտածես վարդագոյն կապիկի մասին: Եթէ մտածես վարդագոյն կապիկի մասին, պիտի չկրնաս որևէ հնարք կատարել»: Ուստի, այս երիտասարդը քաղաքին մերձակայ ազատ տեղ մը կը գտնէ, բազմութիւնը կը հաւաքուի իր շուրջը, և հազիւ թէ կը պատրաստուէր իր առաջին հնարքը կատարել, կը յիշէ իր ուսուցիչի խօսքերը. - «Ինչ որ ընես, չըլլայ որ մտածես վարդագոյն կապիկի մասին»: Իհարկէ, ան իր մտքէն չկրցաւ հանել վարդագոյն կապիկը, և չկրցաւ որևէ հնարք կատարել:

Մենք յաճախ կը փորձենք մեղքը դիմադրել մեր ուշադրութիւնը կենդրոնացնելով վարդագոյն կապիկի վրայ՝ այսինքն մեղքին վրայ քան թէ Աստուծոյ: Եւ ինչքան ջանք կ'ընենք մեղանչելէ դադարելու, ատելի մեղք կը գործենք: Ես այս մօտեցումը կը կոչեմ ինքնակարգապահում:

Ուրիշ մօտեցում մըն ալ կայ, շատ ատելի լաւ, որը կը կոչուի ինքնակառավարում: Երբ կը հասկնանք թէ ով ենք մենք Քրիստոսով և թէ ինչ է Իր նպատակը մեր կեանքին մէջ, մենք չենք ուզէր այլևս մեղանչել: Ինքնակարգապահումը կ'ըսէ. «Ես կ'ուզեմ մեղք գործել, բայց պետք չէ ընեմ»: Ինքնակառավարումը կ'ըսէ. «Ես Աստուծոյ պատկերով ստեղծուած եմ, ես նոր ստեղծագործութիւն եմ Քրիստոսով և մեղքը զիս կը հեռացնէ Աստուծմէ և նարողմէ, ուրեմն ես հետաքրքրութիւն չ'ունիմ մեղանչելու մէջ»:

Ուստի, ինչպէ՞ս մեր մէջ ձևակերպենք ինքնակառավարումը:

1. Ճանչցի՛ր զԱստուած: Մեղքը դիմադրել կը նշանակէ բարին ընտրել, այսինքն՝ Աստուծոյ քան թէ մեղքը, քանի որ Աստուած ատելի յագեցնող ու բաւարարող է քան մեղքը: Մինչ Աստուծոյ հետ ժամանակ կ'անցընենք

և կ'աղօթենք Անոր կամքը ընելու մեր կեանքերուն մէջ, մենք մեր մէջ կը ձևաւորենք խորունկ սէր մը Իր նկատմամբ և ատելութիւն մեղքի նկատմամբ: «Քու ողորմութիւնդ կեանքէն աղէկ է» (Սաղմոս 63:3):

2. Ինքնակարգապահումը օգտակար ձև մըն է մեղքի ոյժը կոտրելու և պաշտպանելու մեր ունեցած հաղորդակցութիւնը Աստուծոյ հետ: Պօղոս երիտասարդ Տիմոթեոսին կը յորդորէ որ փորձութիւնէն փախչի: Յիսուս դիմադրեց մեղքը, նոյնիսկ մինչև մեռնելու աստիճան: Արդեօ՞ք բարկութիւնս կը բոցավառուի երբ յոգնած եմ, եթէ այդպէս է ուրեմն պէտք է ձև մը գտնեմ իմ յոգնածութիւնս թեթևացնելու: Արդեօ՞ք կը բամբասեմ, երբ որոշ մարդկանց միջավայրին մէջ գտնուիմ, եթէ այդպէս է, ուրեմն պէտք է խուսափիմ այդ մարդոցմէ, կամ չխօսիմ ուրիշներու մասին երբ ես անոնց մէջ կը գտնուիմ: Արդեօք կ'ուզե՞ս դադրիլ մեղանչելէ, եթէ իսկապէս կ'ուզես, դիմադրէ այդ՝ նոյնիսկ այն աստիճանի որ դուն քու անձիդ համար մեռնիս: Ինքնակարգապահումը կը դիւրացնէ ինքնակառավարում ձևաւորել մեր մէջ:

3. Սխալ հաւատալիքներուդ համակարգը ուղղէ: Մենք կը մեղանչենք, քանի որ կը մտածենք թէ եթէ չի մեղանչենք բան մը պիտի կորսնցնենք: Մեղքը թերի հաւատքի արդիւնքն է - մենք չենք հաւատար որ Աստուած մեզ համար լաւագոյնը ունի մօտը պահուած: Ի՞նչ տեսակի սխալ և կեղծ հաւատալիքներու կարչած ես: Ի՞նչ հաւատալիք ունիս քու անձիդ վրայ թէ դուն ով ես Քրիստոսով: Հետևեալ սուրբգրային հատուածներուն վրայ խորիէ, որպէսզի ճիշդ սուրբգրային հաւատալիքներու համակարգ մը ձևակերպես թէ ով ես դուն և ինչ ունիս Քրիստոսով. Եփեսացիս 1:3-14 և 4:20-21, Հռովմայեցիս 8:13-17 և 6:3-10, Գաղատացիս 2:20 և 5:24, Բ Պետրոս 1:1-4, Յովհաննոս 17:15, Եբրայեցիս 7:25:

4. Յարաստէ: Վերջապէս, մեղքը դիմադրելը կը պահանջէ հաւատք, Աստուծոյ յալիտենական շնորհքին նկատմամբ: Երբ կրկին կը մեղանչես ու կրկին կ'իյնաս, յիշէ որ Աստուած հաւատարիմ է քու մեղքերդ ներելու կրկին ու կրկին, քանի որ դուն ամէն ջանք դրած կ'ուզես դիմադրել մեղքը:

Տօք. Արմէն Կաթաւեան



Հարցազրույց Փոլ Մաք Ուելլեյ եղբոր հետ

1. Գուր Դ՞ր երկրներ եք:


Ես Աստրալիացի եմ, բայց արմատներս կը հասնին մինչև Գերմանիա:

2. Այս ձեր քանի՞ երրորդ այցն է Հայաստան:

Այս տարի (2007 թ.) որոշեցի այցելել Արևելյան Եվրոպա, որտեղ հրապարակեցի իմ խոսքերը քանի մը եկեղեցիներէ ներս: Ճամբորդութեանս սկիզբը Գերմանիան էր, ուր հիւրընկալուեցայ բաւականին ճոխ կերպով: Իսկապէս Գերմանիան գեղեցիկ երկիր է, ուր արևմուտքի ամէն ճոխութիւնն ու գեղեցկութիւնը կրնաս գտնել: Ինծի հարազատ էր այդ երկիրը, քանի որ պատերազմային երկրներէ եկած էին: Յետոյ անցայ Բուրնինիա, անկէ ետքը Հայաստան: Այս իմ առաջին այցս է Հայաստան: Պատճառը թէ ինչու այցելեցի Հայաստան այն է, որ ես հայ ժողովուրդի հետ երկար և սերտ կապ ունիմ: Իմ կինս հայ է, և մենք երկու գեղեցիկ զաւակներ ունինք, որոնք իրենց մայրիկէն ժառանգած են հայուն իրայատուկ դիմագիծը և գեղեցիկ սև աչքերը: Ինչպէս նաև այն եկեղեցին որուն հովիւն եմ, քանի մը հայ ընտանիքներ կան, այնպէս որ ամէնէն օտար չեմ ինծի հայերը և բաւականին ծանօթ եմ հայոց պատմութեան և անոնց քրիստոնէայ հարուստ ժառանգութեան հետ:

3. Ի՞նչ է ձեր տպատրոփումները Հայաստանի և հայ ժողովուրդի մասին:

Իսկապէս շատ քիչերն են, որոնք կը հասկնան այս փոքր ազգի առանձնայատկութիւնները և թէ ինչ բարի նպաստ բերած են մարդկութեան պատմութեան մէջ: Հայաստանը և հայերը ինծի համար այն ազգն է, որ քրիստոնէայ դիմագիծը և ինքնուրոյնութիւնը չկորսնցուցին տառապանքներու սուկալի ալիքներուն տակ: Անոնք չկորսնցուցին իրենց ինքնուրոյնութիւնը և չ'ենթարկուեցան խաւարի ուժերուն և այդ տառապանքները զագաթնակէտին կը հասնին 1915 թուականին, որպէս հայկական եղեռն: Անոնք 20-րդ դարու չի յայտնաբերուած հերոսներն են: Անոնք իրենց քրիստոնէայ հաւատքն ու ժառանգութիւնը շրջանցեցին ու դիմացան այդ փորձութիւններուն, որուն համար ես խորին յարգանք կ'ընծա-



յեմ: Մինչ կը հաղորդակցէի անոնց հետ, ես մեծ պատրաստակամութիւն գտայ անոնց մէջ զիս իրենց սրտէն ներս ընդունելու, իրականութեան մէջ, ես գտայ որ իրենց հետ նմանութիւն մը ունիմ, թերևս իմ հրեական ծագումս էր, որը Գերմանիոյ մէջ մենք ալ ինչպէս հայերը՝ վտարուեցանք և ենթարկուեցանք անպատմելի տառապանքի: Այցելեցի Ապրիլի 24-ի յուշահամալիրը և գլուխ խոնարհեցուցի այն զոհերուն առաջ, որոնք

պարզապէս մոռնուեցան իրենց հաւատքի պատճառով:

4. Ի՞նչ քաջալերական խօսք կ'ուզէք ըսել Հայաստանի եկեղեցիներուն:

Պատգամս Հայաստանի եկեղեցիներուն այն է, որ Աւետարանը քարոզեն՝ Աստուծոյ փրկութեան պատգամը մի միայն շնորհքի միջոցով: Այս պատգամը անփոփոխ է և մնայուն է առաքելներուն ժամանակէն մինչև օրս:

Ես մեծ փափաքով կը սպասեմ թէ երբ կրկին պիտի այցելեմ: Առաջին այցելութեանս տպաւորութիւնը որը ունեցայ պիտի շարունակէ հետս մնալ մինչև վերջ: Չեմ կրնար բառերով լիովին արտայայտել թէ զիս՝ որպէս Յիսուսի հաւատացեալ այս այցելութիւնը ինչ տուաւ, բայց կրնամ ըսել, թէ ինչ որ տեսայ իմ վրաս մեծ ազդեցութիւն ձգեց և երբ կը պատմեմ իմ փորձառութիւններուս վրայով և կը յիշեմ այն սիրալիր մարդկանց, որոնց հանդիպեցայ արցունքներս չեմ կրնար զսպել և կ'արտասուեմ: Պատգամս եկեղեցիին այն է, որ հաստատուն կենայ Տէրոջմով և այս բանի վրայ հաստատ իմանայ որ ձեր պատկերացուցածէն շատ աւելի մարդիկ կան, որոնք ձեզ համար կ'աղօթեն: Մենք ձեր հետ պիտի կանգնինք և շարունակենք օգնել ձեզ այնքան ինչքան կարող ենք, և սպագան պիտի դիմաւորենք միասին՝ որպէս նոյն Տէր ու Փրկչին ծառայակիցները, որը մեզ այցելեց Իր փրկութիւնովը:

Հարցազրոյցը վարեց՝
Վինա Զրայէրը